

մայ Որգոստային (Foro Romano) փլատակաց մէջ տեսած եմ քանդակ մը զոհելի անասնոց, որոց վրայ ձգուած է ուրարի նմանող լայն եւ հիւսկէն ժապաւէն մը: Այդ ձեւն յառաջ կը բերէ եւ Գարեմբերգ (Գ, 975): Ուրիշ քանդակաց մէջ եւս կը տեսնուին եզներ, իրենց գլխին մետաղեայ զարդերով կամ ծաղկեայ պրսակներով (անդ, 975-6):

Բ. Մատաղի չորքոտանին զարդարուելէ վերջ՝ կը կատարուէր հետագայ պաշտօնը, համաձայն հնագոյն Մաշտոցին եւ այլոց, « ի դրան եկեղեցւոյն »: Կ'ըսէին նախ « ի թիւ » ԼԱ, ԼԳ եւ Ծ սաղմոսները: Յետոյ սրկ. « Խնդրեսցուք հաւատով ». եւ քհն. « Աւրհնութիւն եւ փառս »: Գարձեալ սղմ. ԺԹ, եւ ընթերցուածք՝ զորս գլխով միայն կը նշանակեմ. Գեւտ. Ա, 1-17. Բ թագ. 2, 17-19. Ես. ԾԶ, 6-7. Երբ. ԺԳ, 10-16. Ալեւ. սղմ. ԻԸ. ԴԿ. ԺԳ, 12-15: Ապա քրգ. « Վասն ի վերուստ », որուն կը յաջորդէ երկար աղօթք մը, « Ամենակալ Ած. փառաւորեալ », յորում նախ ցոյց կու տայ մատաղիս էութիւնը կամ վախճանն՝ ըսելով. « Ընգալ Տր. Ած. մեր զնուեր խոստմանս մերոյ՝ զոր խոստացաք քեզ ի նեղութեան մերոյ, յորում աղաչեցաք առ քեզ եւ փրկե-